Արձանագրություն N 2

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-2018/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (eauction.armeps.am) միջոցով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար անձնական կնիքների պատրաստման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

05 նոյեմբերի 2018 թ.
ժամը 12:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը, անդամներ՝ Մագդա Կարապետյանը, Ջուլիետա Բաբայանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-2018/2 ծածկագրով գնման հայտերի բացման և ուսումնասիրման մասին

ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-2018/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Մարիանա Դուրգարյանը նիստը հայտարարեց բացված: Սահմանված ժամկետում հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գներ /ՀՀ դրամ/
	«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ	
	ԱԱՀ չվճարող	
1	1 480 000	1 500 000

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ –ին ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած:**

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՇՁԲ-2018/2 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ _____ Մարիանա Դուրգարյան

Անդամներ՝ _____ Մագդա Կարապետյան

_____ Ջուլիետա Բաբայան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան